

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆԸ

29.08.2014թ.

ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանը մասնակցել է մարզկենտրոն Հրազդանում կայացած արտակարգ իրավիճակների շտաբային ուսումնավարժությանը:

<<<< Կոտայքի մարզում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը և երկրաշարժի հետևանքների վերացման ժամանակ մարդկանց և կենդանիների շրջանում ծագած համաճարակային արձագանքման կազմակերպումը>> թեմայով ուսումնավարժության ընթացքում Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Մարգարյանը ներկայացրել է իր դիտարկումներն ու նկատառումները նմանատիպ ձեռնարկների իրականացման կարևորությունների վերաբերյալ:

Մարզպետի տեղակալն իր խոսքում ընդգծել է նաև այն հանգամանքը, որ ուսուցողական բնույթ ունեցող նմանատիպ միջոցառումները նպաստում են շահագրգիռ տարբեր կազմակերպությունների պատասխանատուների մոտ համապատասխան գիտելիքների և հմտությունների խորացմանը, ինչպես նաև նպաստում հնարավոր արտակարգ իրավիճակների դեպքում արդյունավետ որոշումների կայացմանը: